ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«18» 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000027

Ձեռնարկողը՝ ***«Մեգա Սթոուն» ՍՊԸ***
Արագածոտնի մարզ, Կաքավաձոր համ.

Գործունեությունը՝ ***«Վահանատուֆ» տուֆերի երևակումում 2019-2021 թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000027

< 18 **>** 03 **2020թ.**

«Վահանատուֆ» տուֆերի երևակումում 2019-2021 թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Մեգա Սթոուն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզի Օթևան համայնք

Արագածոտնի մարզի «Վահանատուֆ» տուֆերի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն:

«Վահանատուֆ» տուֆերի երևակումը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Օթևան գյուղի վարչական տարածքում՝ բնակելի գոտուց մոտ 3.0 կմ հյուսիս-արևմուտք և զբաղեցնում է 4.3հա մակերեսով տարածք: Երևակման բուն տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նշանակության արոտավայրով: Մոտակա բնակավայրերն են Կաքավաձոր, Ագարակավան, Կարմրաշեն, Պարտիզակ գյուղերը և Թալին քաղաքը:

Նկարագրական մաս. երևակման ընդհանուր տարածքում նախատեսվում է կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ նպատակ ունենալով պարզաբանել տուֆերի որակական հատկանիշները, որոնք պետք է բավարարեն 9479-98 և 4001-98 ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջները և պիտանի լինեն երեսապատման և ուղիղ կտրվածքի պատքարի արտադրության համար:

Ուսումնասիրվող երևակման տարածքի ծայրակետային կոորդինատները ARM_WGS-84 համակարգով.

ՀՀ ԲՆՕՐՈՒՍՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈՇԱՌ ՍՊԸ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER SNCO
RA YEREVAN PUBLIC ADMINISTRATION ACADEMY

X= 4472037	y=8419728
X=4472206	y=8419673
X=4472243	y=8419661
X=4472249	y=8419658
X=4472344	y=8419733
X=4472430	y=8419824
X=4472274	y=8419885
X=4472250	y=8419840
X=4472162	y=8419804
X=4472092	y=8419777

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132մմ և 112մմ տրամագծերով, ՈւԿԲ 200(ԶԻԼ131 Ա) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորու-թյան ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 5 հորատանցք՝ մինչև 20մ խորությամբ, ընդհանուր՝ 100մ ծավալով, որը ենթակա է փոփոխման՝ կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%:

Նախատեսվում է հորատող հաստոցի 5 տեղակայում և տեղահանում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բնական մերկացումները և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները, ըստ տեսակների, հետևյալն են՝

- հորատահանուկի փաստագրում՝ 100.0մ,
- փորձնական բացահանքի փաստագրում՝ 20մ,
- բնական մերկացումների փաստագրում՝ 60մ:

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 300մ^3 ընդհանուր ծավալով, որից՝ 200մ^3 թարմ չհողմնահարված տուֆեր: Փորձնական բացահանքի ընդհանուր ծավալը կկազմի 300մ^3, իսկ նախատեսված փորձնական հանույթի ծավալը՝ 200մ^3:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բնական մերկացումներից ու բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 17 հանուկային նմուշ՝ մինչև 5.0մ երկարությամբ, 10 մենաքար՝ բացահանքից և մերկացումներից, ինչպես նաև 1 նմուշ՝ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ՝ քիմիական կազմը որոշելու համար:

Վերցված նմուշները համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում կենթարկվեն փորձարկումների:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ երևակման ամբողջ տարածքում:

Տուֆերի երևակման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Հաշվի առնելով տեղամասի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները՝ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Երևակման տարածքում հողերի խախտումը կապված է լինելու փորձնական բացահանքի անցման և հորատման հարթակների կառուցման հետ:

Նախատեսված է նախապես հանել, կտրել հողաբուսաշերտը, ապա այն օգտագործել հորատման հրապարակների և փորձնական բացահանքի վերականգնման համար: Ռեկուլտիվացիոն աշխատանքներն իրականացվելու են ձեռքով, որի համար նախատեսված է 75.000 դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքերևակման տարածքում գրունտային ջրերի հորիզոնները բացակայում են, ինչը պայմանավորված է տարածքը կազմող ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններով:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները և մշտադիտարկումները.

– Նավթամթերքների պահում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում՝ հատուկ տարաներով:

– Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

– Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում՝ որպես մետաղական ջարդոն:

– Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր:

– Արտաթորվող գազերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

– Փոշենստեցման նպատակով փորձնական բացահանքի տարածքի ջրում, հորատման լուծույթների կիրառում:

– Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում:

– Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

– Հանրային անվտանգությունից ելնելով՝ աշխատանքների կատարման տեղամասի ցանկապատում /մեկուսացում/:

– Խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է ավտոտրանսպորտով՝ պայմանագրային հիմունքներով՝ Օթևան գյուղից:

– Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է խախտված տարածքների ռեկուլտիվացիա, փխրեցում, գրունտի խոնավեցում՝ բուսականության բնական վերաճը խթանելու նպատակով:

– Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հորատման և փորձնական բացահանքի անցման ժամանակ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

– Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի մասնավորապես, չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին

մեկ անգամ հաճախականությամբ:

– Ռեկուլտիվացիոն աշխատանքներից հետո հողերի ջրաֆիզիկական հատկությունների մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օթևան համայնքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի ապահովմանն ուղղված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մեգա Սթոուն» ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի «Վահանատուֆ» տուֆերի երևակումում 2019-2021թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան